Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Դդմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի /տղաների խումբ/ (4 ժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստային և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3X4 չափսի

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

3) անձը հաստատող փաստաթուղթ

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում

5) ինքնակենսագրություն (Ձեւ 5)

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստողփաստաթուղթ

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2021թվականի մայիսի 5-ից մինչև մայիսի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 14:00-ին, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում: Հասցեն՝ գյուղ Դդմաշեն, 1-ին փողոց, շենք 38,

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)36-06-96 հեռախոսահամարով:

ՀվՀՀ 08606247